ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

30.04.2014թ.
217-ի 3

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Դավիթ Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

2014թ.-ի մարտի 26-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ կառավարությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թ.թ.-ի միջոցառումների ծրագրի կատարման հաշվետվությունների պատճենները:

ՀՀ կառավարությունից ստացել ենք պատասխան, որում նշված է, որ հայցվող տեղեկությունը կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդ նիստում հաստատվելուց հետո կտեղադրվի կառավարության կայքում իսկ պատճենները կտրամադրվեն (http://givemeinfo.am/hy/case/1328/): Սակայն, ՀՀ կառավարության կայքում տեղադրված են միայն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թ.թ.-ի միջոցառումների ծրագրի արդյունքների մոնիթորինգի 2010թ.-ի տարեկան եւ 2011թ.-ի առաջին եռամսյակի հաշվետվությունները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թ.թ.-ի միջոցառումների ծրագրի 2009թ.-ի, 2011թ.-ի երկրորդ, երրորդ եւ չորրորդ եռամսյակների եւ 2012թ.-ի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունների պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Սույն հարցման կարգավիճակին կարող եք առցանց հետեւել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.givemeinfo.am կայքում՝ հետեւյալ հղմամբ՝ http://givemeinfo.am/hy/case/1356/:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան